

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՔՆԱՐԻԿ ՀԱԿՈՒԻ

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ-ԻՐԱՎԱԿԱՆ  
ԱԿՏԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

ԺԲ. 00.06 - «Միջազգային իրավունք» մասնագիտությամբ  
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2014

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ВАРДАНЯН КНАРИК АКОПОВНА

МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫЕ АКТЫ ПО ЗАЩИТЕ БЕЖЕНЦЕВ И  
ИХ РЕАЛИЗАЦИЯ В РА

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по  
специальности 12.00.06 “Международное право”

ЕРЕВАН – 2014

*Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում*

Գիտական ղեկավար՝	իրավաբանական գիտությունների դոցենտ, ի.գ.թ. Վ.Վ.Քոչարյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆ. Վ.Յ.Յովհաննիսյան իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ Լ.Ս.Գևորգյան
Առաջատար կազմակերպություն՝	ՀՀ սահմանադրական իրավունքի կենտրոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014թ.-ի դեկտեմբերի 5-ին՝ ժամը 14<sup>30</sup>-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՅ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2014թ.-ի նոյեմբերի 3-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,  
իրավ.գիտ.դոկտոր, դոցենտ

Վ.Դ. Ավետիսյան

*Тема диссертации утверждена в  
Ереванском государственном университете*

Научный руководитель:	кандидат юридических наук, доцент В.В. Кочарян
Официальные оппоненты:	доктор юридических наук, профессор В.А.Оганесян кандидат юридических наук, ассистент Л.С.Геворгян
Ведущая организация:	Центр Конституционного права РА

Защита состоится 5-го декабря 2014г., в 14.30 часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 3-го ноября 2014г.

Ученый секретарь специализированного совета,  
доктор юридических наук, доцент

В.Д. Аветисян

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻՎԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ:** Փախստականների և միգրացիոն այլ հոսքերի զանգվածային բնույթը ժամանակակից աշխարհին բնորոշ երևույթ է: Ներկայումս փախստականների ընդունումն ու նրանց իրավունքների իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը պետությունների առջև ծառայած կարևորագույն խնդիրներից են, որոնք գնալով ավելի մեծ ծավալներ են ձեռք բերում՝ իրենց վրա սևեռելով միջազգային հանրության ուշադրությունը և պահանջելով պետությունների միջև համագործակցությունն ու օժանդակությունը հասցնել որակական նոր մակարդակի: Ներկայումս փախստականների թիվը ոչ միայն չի նվազում, այլև առկա են աճի միտումներ: Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից աշխարհի 44 պետությունների վերաբերյալ կատարված ուսումնասիրություններից հայտնի է դառնում, որ 2012թ.-ից 2013թ. երկրներից 30-ը գրանցել են ապաստան հացողների թվի աճ՝ մոտ 28%-ով, որը վերջին 5 տարիների՝ ապաստանի դիմումների քանակի ամենաբարձր ցուցանիշն է: Ընդ որում՝ ավելացել է ոչ միայն ապաստան հայցողների թիվը, այլև պետությունների շրջանակը, որտեղ անձինք միջազգային պաշտպանություն են փնտրում<sup>1</sup>:

Ներկայումս փախստականների առաջացման պատճառների գերակշիռ մաս են կազմում պատերազմները, ներքին հակամարտությունները, որի խոսուն օրինակ է Սիրիայում 2011թ.-ից ընթացող քաղաքացիական պատերազմը, որի հետևանքով տասնյակ հազարավոր անձինք ստիպված եղան լքել իրենց հայրենիքը և ապաստան փնտրել այլ երկրներում, այդ թվում նաև՝ ՀՀ-ում: Բացի վերոնշյալից՝ փախստականների առաջացման պատճառ են նաև էկոլոգիական աղետները, չնայած որ փախստականների միջազգային-իրավական պաշտպանությանն ուղղված փաստաթղթերը չեն կարգավորում բնական աղետների հետևանքով իրենց բնօրրանից տեղահանված անձանց իրավական կարգավիճակի հետ կապված հարցերը:

Փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը պահանջում է միջազգային հանրության կողմից մշակել դրա արդյունավետ լուծմանն ու միգրացիոն շարժի իրավական կարգավորմանն ուղղված նոր ռազմավարություն, իրականացնել համակարգված և համաձայնեցված միջոցառումներ: Դրանց շարքում առավելապես կարևորվում են պետությունների կողմից անօրինական միգրացիայի դեմ պայքարին ուղղված միասնական քաղաքականության մշակումը, պետությունների քաղաքական պատասխանատվությունը, վերահսկողական մեխանիզմների ձևավորումն ու հետևողականությունը և այլն: Բացի դրանից՝ չնայած այն հանգամանքին, որ պետությունների մեծ մասն այսօր միացել է Փախստականների կարգավիճակի 1951թ. կոնվենցիային (այսուհետև՝ 1951թ. կոնվենցիա), այնուհանդերձ, մի շարք հանգամանքներով պայմանավորված՝ ոչ բոլորն են պատշաճ կատարում իրենց

<sup>1</sup> Տե՛ս UNHCR Asylum Trends 2013. Levels and Trends in Industrialized Countries, UNHCR, 21 March, 2014, էջ 9: <http://www.unhcr.org/5329b15a9.html>

ստանձնած պարտավորությունները: Այս առումով հատկապես կարևորում ենք միջազգային կազմակերպությունների, մասնավորապես ՄԱԿ ՓԳՅ-ի, ինչպես նաև ներպետական հասարակական կազմակերպությունների դերը:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև ուսումնասիրվող հիմնախնդրին տարածաշրջանային մակարդակով լուծում տալու անհրաժեշտությամբ: Տարածաշրջանային մեխանիզմները ավելի լայն հնարավորություն ունեն վեր հանելու կոնկրետ տարածաշրջանին բնորոշ խնդիրները և արդյունավետ լուծում տալու դրանց: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության համար հատկապես կարևորվում են ԱՊՀ շրջանակներում փախստականների հիմնախնդրի կարգավորմանն ուղղված ռազմավարության մշակումը, պետությունների միջև համագործակցության ընդլայնումն ու վերահսկողական միջոցառումների իրականացումը:

Այս ամենը, իհարկե, դժվար է իրականացնել ներկայիս պայմաններում, երբ նկատելի են այնպիսի բացասական դրսևորումներ, ինչպիսիք են ապաստան տրամադրելը անհիմն մերժելը և դրանով իսկ միջազգային-իրավական նորմերն ու սկզբունքներն անտեսելը: Սոցիալ-քաղաքական ցնցումների հետևանքով իրենց հայրենիքը լքած կամ բռնի տեղահանված անձանց թիվը աճում է, սակայն պետությունները, իրենց ներպետական շարժառիթներից ելնելով, հաճախ ջանում են կանխարգելել մարդկանց ներհոսքը:

Ակնհայտ է, որ փախստականների ընդունումը բազմաթիվ դժվարություններ է ստեղծում ապաստանի երկրների համար՝ հատկապես ծանրաբեռնելով ավելի ցածր կենսամակարդակ ունեցող պետությունների տեղական ռեսուրսները: Սակայն փորձը ցույց է տալիս, որ փախստականների ինտեգրումը միաժամանակ նաև ընդունող երկրի համար մեծ հնարավորություններ է ստեղծում: Մասնավորապես, փախստականները նոր աշխատուժ են իրենց համապատասխան հմտություններով, որոնք կարող են կիրառվել ընդունող պետության կողմից իր սակավ բնակեցված տարածքները զարգացնելու համար, փախստականների առկայությունը կարող է ընդունող երկրին երկարաժամկետ օտարերկրյա ներդրումներ ստանալու հնարավորություն ընձեռել: Բացի դրանից՝ այն կարող է նպաստել ընդունող կառավարությունների միջազգային հեղինակության աճին՝ ամրապնդելով նրանց՝ միջազգային հանրության պատասխանատու անդամ հանդիսանալը:

Փախստականների հիմնախնդիրն առկա է նաև Հայաստանի Հանրապետությունում՝ ի հայտ գալով դեռևս 1988թ.-ից, երբ մոտ 500 հազ. հայեր բռնի տեղահանվեցին Ադրբեջանի տարբեր բնակավայրերից. նրանց մոտ 360 հազ.-ը բնակություն հաստատեցին նորանկախ ՀՀ-ում:

Հայաստանի Հանրապետությունում այսօր տարբերակում ենք փախստականների երկու խումբ՝ էթնիկ հայեր, որոնք հիմնականում եկել են Ադրբեջանից՝ 1988-1992թթ., Իրաքից՝ 2010-2012թթ. և Սիրիայից՝ 2012թ., և փախստականներ այլ երկրներից՝ մասնավորապես Իրանից, Մալիից, Գվինեայից, Կոտ Դ'իվուրայից, Լիբանանից և այլն:

Փախստականների իրավունքների պաշտպանությանն ուղղված ՀՀ ներպետական օրենսդրությունը կատարելագործելու և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար 2008թ. նոյեմբերի 27-ին ՀՀ

Ազգային ժողովն ընդունել է «Փախստականների և ապաստանի մասին» օրենք, որն այսօր ուղորտին առնչվող այլ նորմատիվ-իրավական ակտի հետ միասին փախստականներին տրամադրում է սոցիալական և տնտեսական հիմնական իրավունքները, սակայն երբեմն հնարավոր չի լինում ապահովել դրանց իրագործումը: Սույն նպատակին հասնելու համար անհրաժեշտ է հիմնել ինտեգրացիոն այնպիսի արդյունավետ մեխանիզմ, որը կնպաստի այդ իրավունքների լիակատար իրականացմանը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ:** Ատենախոսության հիմնական նպատակը փախստականների իրավական կարգավիճակն ամրագրող միջազգային-իրավական փաստաթղթերի և ազգային օրենսդրության համալիր վերլուծության հիման վրա փախստականների պաշտպանության հետ կապված միջազգային և ներպետական իրավական հիմնախնդիրների ուսումնասիրությունն է:

Նշված նպատակին հասնելու համար փորձ է արվել առաջադրել և լուծել հետևյալ խնդիրները.

- վեր հանել փախստականների միջազգային-իրավական պաշտպանության ինստիտուտի ձևավորման և զարգացման պատմաիրավական հիմքերը,
- ուսումնասիրել փախստականների իրավունքների պաշտպանության սկզբունքների նշանակությունը ժամանակակից միջազգային իրավունքում,
- քննարկել փախստականի համընդհանուր հասկացության ընդլայնման անհրաժեշտությունը,
- առաջարկել պետությունների կողմից փախստականների իրավունքների պաշտպանության արդյունավետ իրականացման գործուն մեխանիզմներ,
- գնահատել ներկայումս ՀՀ օրենսդրության մեջ փախստականների իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային-իրավական նորմերի և սկզբունքների իմպլեմենտացիայի վիճակը,
- հիմնավորել փախստականների իրավունքների պաշտպանության վերաբերյալ միջազգային նորմերն ու սկզբունքները ՀՀ օրենսդրության մեջ իմպլեմենտացնելու գործընթացի բարելավման անհրաժեշտությունը.
- մատնանշել փախստականների իրավունքների պաշտպանության վերաբերյալ իմպլեմենտացված նորմերի կատարելագործման ուղիները,
- վեր հանել փախստականների իրավունքների պաշտպանության վերաբերյալ ներպետական նորմերի իրագործման ընթացքում առկա բացերն ու առաջարկել դրանց վերացման հնարավոր ուղիներ:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԸ:** Փախստականների իրավունքների պաշտպանության վերաբերյալ հայրենական աղբյուրների քանակի սակավության պատճառով ատենախոսության տեսական հիմք են հանդիսացել հիմնականում արտասահմանյան հեղինակների աշխատությունները: Մասնավորապես, հետազոտության ենթարկված հիմնահարցերի լուսաբանման գործում նշանակալի դեր են կատարել այնպիսի հայտնի արտերկրի գիտնականների աշխատություններ, ինչպիսիք են՝ Ջ.Հեթվեյը, Գ.Գուդփին-Գիլը, Ա.Գրահլ-Մեդսենը, Ն.Ռոբինսոնը, Դ.Իվանովը, Լ.Պավլովան, Ա.Սելիվանովը, Կ.Գրիգորիչևը, Ե.Ջինովինան, Յու. Սարաշևսկին և այլք:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԴԻՄՔԸ:** Հետազոտության նորմատիվ հիմք են հանդիսացել միջազգային-իրավական համընդհանուր և տարածաշրջանային փաստաթղթերը, այդ թվում՝ 1948թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. միջազգային դաշնագիրը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ 1950թ. եվրոպական կոնվենցիան, Հայ և ռուս փախստականներին անձը հաստատող փաստաթուղթ տրամադրելու վերաբերյալ Ազգերի լիգայի 1926թ. համաձայնագիրը, Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիան, Փախստականների կարգավիճակին վրաբերող 1967թ. արձանագրությունը, Աֆրիկայում փախստականների հիմնախնդիրների կոնկրետ ասպեկտների վերաբերյալ 1969թ. կոնվենցիան, Փախստականների մասին Կարթագենի 1984թ. հռչակագիրը և այլն:

Ատենախոսության նորմատիվ հիմք են հանդիսացել նաև ՀՀ Սահմանադրությունը՝ 2005թ. փոփոխություններով ու լրացումներով, «Փախստականների և ապաստանի մասին», «Քաղաքական ապաստանի մասին», «Օտարերկրացիների մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին», «Պետական սահմանի մասին» օրենքները, ինչպես նաև փախստականների հիմնահարցերը կարգավորող ՀՀ այլ օրենքներ, ՀՀ կառավարության որոշումներ և այլ ներպետական իրավական ակտեր:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՔԸ:** Հեղինակը կիրառել է հետազոտության ընդհանուր գիտական (դիալեկտիկական, համակարգային, տրամաբանական, պատմական), ինչպես նաև մասնավոր կամ հատուկ (իրավահամեմատական, վերլուծական, վիճակագրական, համակարգակառուցվածքային) մեթոդներ: Դրանց համատեղումը նպատակ է հետապնդել ապահովել հետազոտության և դրա գիտական արդյունքների օբյեկտիվությունն ու արժանահավատությունը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ:** Հայ իրավագիտության մեջ առաջին անգամ փորձ է արվել փախստականների իրավական կարգավիճակի վերաբերյալ ուսումնասիրությունը կատարել միջազգային իրավունքի, ինչպես նաև ներպետական իրավունքի համատեքստում՝ լրացնելով խնդրի հետազոտման համալիր մոտեցման բացը: Սույն ոլորտում հայ գիտնականների գիտական աշխատությունների սակավաթիվ լինելը անհրաժեշտություն է առաջացնում համակողմանի ուսումնասիրություն կատարելու՝ փախստականների իրավական կարգավիճակի կարգավորման հիմնախնդրի վերաբերյալ ամբողջական պատկերացում տալու նպատակով: Հեղինակը փորձել է համալիր ուսումնասիրություն կատարել և դիտարկել փախստականների հիմնախնդրին առնչվող բոլոր ասպեկտները, վեր հանել փախստականների իրավունքների պաշտպանության վերաբերյալ ՀՀ օրենսդրությունում միջազգային նորմերի և սկզբունքների իմպլեմենտացիայի և իրագործման առկա վիճակը: Հեղինակը անդրադարձ է կատարել ոլորտում առկա հիմնական խնդիրներին՝ առաջարկելով դրանց լուծման հնարավոր

ուղիներ, որոնք կապահովեն ՀՀ-ի կողմից ստանձնած միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ:**

**1.** Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության վերաբերյալ միջպետական պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս ենթադրելու, որ փախստականների իրավունքների պաշտպանության կարևորագույն երաշխիք համարվող չվերադարձնելու (non-refoulement) սկզբունքը միջազգային սովորութային իրավունքի նորմ է, որը պարտավորություններ է առաջացնում նաև այն պետությունների համար, որոնք չեն միացել 1951թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիային: Այնուամենայնիվ չվերադարձնելու սկզբունքը չունի բացարձակ բնույթ, որը կապահովեր նրա անշեղորեն կատարումը բոլոր իրավիճակներում, այն չի կարող համարվել միջազգային-իրավական իմպերատիվ (jus cogens) նորմ:

**2.** Փախստականների իրավունքների միջազգային-իրավական պաշտպանության խնդրի արդյունավետ լուծման ժամանակակից միջոց ենք համարում տարածաշրջանային նոր մեխանիզմների ձևավորումը և գոյություն ունեցողների կատարելագործումը, տարածաշրջանում առաջ եկող խնդիրների լուծմանն ուղղված ad hoc մարմինների ստեղծումը: Նման համակարգի ձևավորումը ավելի կատարյալ կդարձնի ապաստան հայցողների և փախստականների պաշտպանությունը կոնկրետ տարածաշրջանում՝ նպաստելով նրանց նկատմամբ ընդունվող որոշումների արդյունավետության բարձրացմանը և գործընթացների մատչելիությանն ու արագությանը: Տարածաշրջանին բնորոշ առանձնահատկություններից ելնելով՝ փախստականի կարգավիճակի որոշման միասնական գործընթաց սահմանելը և երկիր մուտք գործելու հետ կապված միասնական մեխանիզմների ամրագրումը կստեղծեն ապաստանի իրավունքի իրականացման արդյունավետ երաշխիքներ:

**3.** Տարածաշրջանային մակարդակով փախստականների միջազգային-իրավական պաշտպանության հիմնախնդիրները կարգավորելուն ուղղված գործընթացների զարգացումը հնարավորություն կընձեռնի ընդլայնել փախստականի հասկացությունը՝ նպատակ հետապնդելով ներառելու զինված ընդհարումների, ներքին հակամարտությունների, բռնությունների և հասարակական կարգի այլ խախտումների հետևանքով իրենց երկրի սահմանները լքած անձանց, որն էլ հնարավորություն կտա հրաժարվել Փախստականի կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիայով և Փախստականի կարգավիճակին վերաբերող 1967թ. արձանագրությամբ ամրագրված փախստականի համընդհանուր հասկացությունը ընդլայնելու այսօր լայնորեն քննարկվող գաղափարից:

**4.** Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության ինստիտուցիոնալ պատշաճ մեխանիզմի բացակայությունը հանգեցնում է մասնակից պետությունների կողմից կոնվենցիոն նորմերի կամայական մեկնաբանությունների և կոնվենցիայի դրույթների կատարման նկատմամբ պատշաճ վերահսկողության բացակայության: Փախստականի կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիայի շրջանակներում համապատասխան կառուցակարգի բացակայության պատճառով չկան անհատների՝ կոնվենցիայով սահմանված

իրավունքների պաշտպանության պատշաճ մեխանիզմներ, որոնք կայանանավորեին պետությունների պատասխանատվությունը՝ կատարելու իրենց ստանձնած միջազգային պարտավորությունները: ՄԱԿ ՓԳՀ Գործադիր կոմիտեի մեկնաբանությունները զուտ խորհրդատվական բնույթի են և չեն ապահովում կոնվենցիայի դրույթների արդյունավետ կատարման երաշխիքներ: Ուստի նպատակահարմար ենք համարում մարդու իրավունքների վերաբերյալ այլ պայմանագրերի օրինակով ստեղծել կոնվենցիոն մարմին, որն իրավասու կլինի վերահսկողություն իրականացնելու անդամ-պետությունների կողմից փախստականների իրավունքների պաշտպանության ոլորտում իրենց ստանձնած պարտավորությունների պահպանման նկատմամբ, ինչպես նաև կմեկնաբանի կոնվենցիայի դրույթները՝ դրանց միասնական ընկալման և կիրառման համար: Նման մարմնի ստեղծումը չի պահանջի փոփոխություն կատարել Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիայում, և կարող է իրականացվել լրացուցիչ արձանագրություն ընդունելու միջոցով:

**5.** Ապաստանի երկրի իշխանությունների կողմից ապաստան հայցողների և փախստականների իրավունքների պաշտպանությանն ուղղված գործողություններն ավելի արդյունավետ և լիարժեք կլինեն, եթե պետական մարմինների կողմից դրանցում հասարակական կազմակերպությունների մասնակցությունը ապահովվելու համապատասխան պայմաններ ստեղծվեն: Անհրաժեշտ է ձևավորել ավելի կայուն և սերտ համագործակցություն պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների միջև, որի շնորհիվ վերջիններս կլրացնեն, իսկ անհրաժեշտության դեպքում էլ կփոխարինեն պետական մարմինների գործունեությանը:

**6.** Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության ոլորտում ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից առաջադրված «sur place» փախստականի հայեցակարգը, որը ենթադրում է, որ անձը երկիրը լքելիս փախստական չէ, սակայն այդպիսի կարգավիճակի սկսում է հավակնել ավելի ուշ, նախատեսված չէ «Փախստականների և ապաստան հայցողների մասին» ՀՀ օրենքով: Սակայն հաշվի առնելով նման դեպքերի առկայությունը, ինչպես նաև ազգային օրենսդրության շրջանակներում փախստականի սահմանման առանձին դրույթների կատարելագործման անհրաժեշտությունը՝ կարևորում ենք այդ հայեցակարգի ներդրումը ՀՀ օրենսդրության մեջ՝ վերջինիս իրավական հստակ կարգավորումն ապահովելու համար:

**7.** Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության արդի միտումներից մեկն այն է, որ փախստականների համար պետք է երաշխավորվեն ոչ միայն միջազգային-իրավական նորմերով սահմանված իրավունքները, այլև ապաստանի երկրում անհրաժեշտ է ստեղծել ինտեգրացիոն այնպիսի արդյունավետ մեխանիզմ, որը կնպաստի այդ իրավունքների լիակատար իրականացմանը: Ակնհայտ է, որ ապաստանի տրամադրման իրավական հիմքը, օրենքի առջև հավասարությունը և խտրականության արգելքի վերաբերյալ դրույթները ոչ միշտ են վերացնում առկա խոչընդոտները և չեն երաշխավորում փախստականների իրավունքների արդյունավետ իրագործումը: Ժամանակակից պայմաններում պետությունները պարտավորություն են կրում իրենց երկրում ստեղծել այդ իրավունքների իրականացման նպաստավոր պայմաններ, որոնք



կերաշխավորեն փախստականների լիակատար ինտեգրումը հասարակությանը:

**8. Հայաստանի Հանրապետության քայլերը ապահովելու փախստականների և ապաստան հայցողների իրավունքների արդյունավետ պաշտպանությունը** հասարակության մեջ երբեմն համակարգված չեն և կաշկանդված են իմպլեմենտացնող նորմերի ու ենթաօրենսդրական ակտերի բացակայությամբ կամ ոչ կատարյալ լինելով: Այս հանգամանքը խոչընդոտում է երկրում արդյունավետ ինտեգրացիոն մեխանիզմների ձևավորումը և կայացումը, ուստի նպատակահարմար ենք համարում քննարկել «Փախստականների և ապաստան հայցողների մասին» ՀՀ օրենքում փախստականների ինտեգրման հետ կապված հարաբերությունները կարգավորող առանձին բաժին սահմանելու կամ երկրի ներսում իրականացվող փախստականների ինտեգրման գործընթացների կարգավորմանն ուղղված առանձին օրենք ընդունելու հնարավորությունը: Նման կարգավորումը «ՀՀ քաղաքացիության մասին» և «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքների հետ միասին կհամալրի Հայաստանի Հանրապետությունում ներգաղթային քաղաքականության իրագործման նորմատիվային հիմքը:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ:** Հետազոտության ընթացքում ձևավորված եզրահանգումներն ու հիմնական դրույթները կարող են օգտագործվել միգրացիայի, ապաստանի և փախստականների իրավունքների պաշտպանության հետ կապված գործունեություն իրականացնող պետական, մասնավոր և միջազգային մարմինների կողմից:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև իրավաստեղծ և իրավակիրառ գործունեություն իրականացնելիս՝ ապաստան հայցողների և փախստականների իրավունքների պաշտպանությանն առնչվող ՀՀ օրենքները կատարելագործելու, դրանք փախստականների պաշտպանության վերաբերյալ միջազգային-իրավական նորմերին ու սկզբունքներին համապատասխանեցնելու նպատակով: Հետազոտության արդյունքները կարող են օգտակար լինել նաև տարբեր բուհերում ատենախոսության առարկայի հետ առնչվող դասընթացների դասավանդման, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից իրականացվող այլ գիտահետազոտական գործունեության ընթացքում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ:** Ատենախոսության թեման հաստատվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնում, որի նիստերի ժամանակ քննարկվել և գրախոսվել են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսության տեսական եզրահանգումներն ու դրույթները իրենց արտացոլումն են գտել հեղինակի 5 գիտական հոդվածներում, ինչպես նաև Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում «Փախստականների միջազգային-իրավական պաշտպանությունը» մագիստրոսական հատուկ դասընթացի դասավանդման ընթացքում:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, 6 պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ-իրավական ակտերի ու գրականության ցանկից: Ատենախոսության ծավալն է 174 մեքենագիր էջ:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածություն** մեջ հիմնավորվել են ատենախոսության թեմայի արդիականությունը և արդյունքների գիտական նորույթը, ներկայացվել են ատենախոսության նպատակը և խնդիրները, թեմայի մշակվածության աստիճանը, ատենախոսության օբյեկտը և առարկան, ձևակերպվել են պաշտպանության ներկայացված հիմնական դրույթները: Ատենախոսության ներածությունը նաև տեղեկություններ է պարունակում աշխատանքի կառուցվածքի, տեսական, նորմատիվային և մեթոդաբանական հիմքերի, արդյունքների փորձարկման և գործնական նշանակության վերաբերյալ:

**Առաջին գլուխը («Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության զարգացումը»)** բաղկացած է երկու պարագրաֆից և նվիրված է փախստականների միջազգային-իրավական պաշտպանության ինստիտուտի զարգացման և կայացման պատմությանը, ինչպես նաև փախստականների միջազգային-իրավական պաշտպանության սկզբունքների ուսումնասիրմանը:

**Առաջին պարագրաֆում («Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության ինստիտուտի կայացումը»)** ուսումնասիրվում է փախստականների միջազգային-իրավական պաշտպանության ինստիտուտի զարգացման և կայացման պատմությունը: Ներկայացվում է փախստականների միջազգային-իրավական պաշտպանության ինստիտուտի զարգացման պատմությունը փուլ առ փուլ՝ Ազգերի լիգայի շրջանակներում փախստականների միջազգային-իրավական պաշտպանությանն ուղղված միջազգային փաստաթղթերի ընդունումից մինչև Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. համընդհանուր կոնվենցիայի և դրան հաջորդող մի շարք տարածաշրջանային փաստաթղթերի ընդունումը: Մասնավորապես ուսումնասիրվում են Ազգերի լիգայի կողմից փախստականների հարցերով առաջին Գերագույն հանձնակատար նշանակված Ֆ.Նանսենի ջանքերի շնորհիվ փախստականներին անձը հաստատող փաստաթուղթ («Նանսենյան անձնագիր») տրամադրելու վերաբերյալ ընդունված համաձայնագրերը, ոոոնք ի սկզբանե նվիրված էին ռուս և հայ փախստականներին: Այնուհետև դրանց դրույթները հետագա փաստաթղթերով տարածվեցին նաև թուրք, ասորի, բուլղարացի և ազգությամբ այլ փախստականների վրա: Հետագոտվել են նաև այդ ժամանակաշրջանում ընդունված այլ իրավական փաստաթղթերը, որոնք փորձեցին կատարել փախստականի հասկացության սահմանման, փախստականների միջազգային-իրավական պաշտպանության սկզբունքների ամրագրմանն ուղղված առաջին քայլերը (օրինակ 1933թ. Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայով առաջին անգամ փորձ կատարվեց սահմանելու չվերադարձնելու սկզբունքը): Փաստորեն, 1922-1939թթ. համաձայնագրերում ձևակերպվեցին դրույթներ, որոնք ընկան փախստականների պաշտպանության վերաբերյալ հետագայում ընդունված մի շարք ունիվերսալ և տարածաշրջանային փաստաթղթերի հիմքում: Այնուամենայնիվ դրանք զերծ չէին թերություններից և բացթողումներից, բացի դրանից՝ դրանք համաձայնեցված ու հաջորդականորեն չէին կիրառվում,

համաձայնագրերը զուտ խորհրդակցական բնույթի էին, իսկ կոնվենցիաները վավերացվում էին միայն մի քանի պետությունների կողմից և այն էլ՝ որոշակի վերապահումներով: Արդյունքում անհրաժեշտություն առաջացավ ընդունելու համընդհանուր բնույթ ունեցող մի փաստաթուղթ, որը կտար մեկ ընդհանուր հասկացություն «փախստական» եզրույթի համար, կամրագրեր փախստականի անհատական ճանաչման սկզբունքը և կսահմաներ փախստականների իրավունքների պաշտպանության այլ իրական երաշխիքներ: Ըստ այդմ էլ՝ 1951թ. ընդունվեց Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան և ձևավորվեց Միավորված ազգերի կազմակերպության փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակը: Սույն պարագրաֆում բացի վերոնշյալ համընդհանուր մեխանիզմներից անդրադարձ է կատարվել նաև փախստականների իրավունքների պաշտպանության տարածաշրջանային մեխանիզմների ձևավորման և զարգացման պատմությանը:

**Երկրորդ պարագրաֆում («Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության սկզբունքները»)** վեր են հանվում փախստականների միջազգային-իրավական պաշտպանության սկզբունքները: Հատկանշական է, որ փախստականների միջազգային-իրավական պաշտպանության հիմքում ընկած են ինչպես մարդու իրավունքների պաշտպանության ընդհանուր, այնպես էլ այդ ոլորտի կարգավորմանն ուղղված հատուկ սկզբունքները: Ատենախոսության մեջ ներկայացվում է խտրականության արգելման սկզբունքը՝ իբրև մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ընդհանուր սկզբունք, որն իր ամրագրումն է գտել նաև 1951թ. կոնվենցիայում: Այն կիրառվում է քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, փախստականների և ապաստան հայցողների ու այլ օտարերկրացիների նկատմամբ: Պետության կողմից ցանկացած տարբերվող վերաբերմունք պետք է ողջամիտ, օբյեկտիվ ու համաչափ լինի և ուղղված լինի օրինական արդյունքին հասնելուն: Առանձնակի ուշադրություն է բևեռվում չվերադարձնելու սկզբունքին (non-refoulement)՝ որպես փախստականների միջազգային-իրավական պաշտպանության հատուկ սկզբունք: Հիմնավորվում է չվերադարձնելու սկզբունքի՝ սովորութային իրավունքի նորմ հանդիսանալը, որը ենթադրում է բոլոր պետությունների կողմից փախստականների իրավունքների պաշտպանության և/կամ մարդու իրավունքների վերաբերյալ փաստաթղթերով սահմանված անձին այն երկրի տարածք չվերադարձնելու կամ չվտարելու պահանջի կիրառում, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը վտանգ կսպառնա՝ անկախ այդ փաստաթղթերին մասնակից հանդիսանալու հանգամանքի: Հիմնավորվում է նաև, որ չնայած իր պարտադիր բնույթին, ինչը ենթադրում է, որ ոչ մի բացառություն չպետք է կիրառվի ցանկացած հանգամանքներում, դա այդպես չէ: Մի շարք կոնվենցիոն բացառությունների սահմանումը թույլ է տալիս եզրակացնելու, որ գոյություն չունի այս սկզբունքի բացարձակ կիրառում բոլոր հանգամանքներում, և չնայած նրան, որ չվերադարձնելու սկզբունքի հիմնական անկյունաքարը շատ հեղինակներ տեսնում են վերջինիս իմպերատիվ (jus cogens) բնույթ ունենալու մեջ, այնուամենայնիվ, դա այդպես չէ: Սույն պարագրաֆի շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև փախստականների իրավունքների պաշտպանության մյուս հատուկ սկզբունքներին, մասնավորապես, ապաստան

հայցելու համար երկիր անօրինական մուտք գործելու դեպքում անձին չձերբակալելու (չկալանավորելու) սկզբունքին: Հիմնավորվում է այն, որ այնտեղ, որտեղ առկա են հսկողության այլընտրանքային բավարար մեխանիզմներ (օրինակ, պարբերաբար ներկայանալու պարտավորություն կամ երաշխավոր ունենալու պահանջ), առաջին հերթին դրանք պետք է կիրառվեն, եթե չկան հիմքեր ենթադրելու, որ նման այլընտրանքը կոնկրետ տվյալ դեպքում արդյունավետ չի լինի: Դրա համար էլ ձերբակալումը պետք է կատարվի միայն բոլոր հնարավոր այլընտրանքային տարբերակները բազմակողմանի ուսումնասիրելուց կամ հսկողության մեխանիզմն իր օրինական և արդարացված նպատակին չժառայելու վերաբերյալ հիմնավորված փաստեր ներկայացնելուց հետո: Այս առումով հատկապես ուսումնասիրվել են 2012թ. հոկտեմբերին ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից մշակված «Ձերբակալման ուղեցույցերը», որը պարունակում է ապաստան հայցողների ձերբակալման վերաբերյալ դրույթներ՝ իր հատուկ հավելվածում ներառելով ձերբակալման այլընտրանքային միջոցները: Փախստականների իրավունքների պաշտպանության հատուկ սկզբունք է նաև ընտանիքի միասնության սկզբունքը: Վեր է հանվել այն հանգամանքը, որ 1951թ. կոնվենցիան չի ամրագրում ընտանիքի միասնության իրավունքը փախստականների համար: Սակայն միջազգային իրավունքի մի շարք հեղինակների կարծիքով փախստականների իրավունքների պաշտպանության սկզբունքները պետք է մեկնաբանել միջազգային իրավունքի առաջադիմական զարգացման և պետությունների պրակտիկայի լույսի ներքո: Ընտանիքի միասնության իրավունքը ձևավորվել և զարգացել է ընդհանուր միջազգային իրավունքում և չի կարող սահմանափակվել կամ չգործածվել փախստականների իրավունքների պաշտպանության ոլորտում: Այն իրավունք է, որը պատկանում է բոլորին՝ անկախ իրենց կարգավիճակից: Սույն պարագրաֆում անդրադարձ է կատարվել նաև փախստականների իրավունքների պաշտպանության մեկ այլ հատուկ սկզբունքին՝ պետությունների միջև բեռի/պարտավորությունների բաշխման և պետությունների համագործակցությանը: Հիմնավորվել է այն դրույթը, որ չնայած նրան, որ գոյություն ունի ընդհանուր պատկերացում, որ պարտավորությունների բաշխումը կնպաստի ցածր կենսամակարդակ ունեցող երկրներին անհարկի ծանրաբեռնելուց խուսափելուն և երկրի պայմաններից ելնելով ապաստանի բացասական որոշում կայացնելու դեպքերը կրճատելով կլուծի փախստականներին ապաստան տրամադրելու խնդիրը, պրակտիկայում հանգում ենք մեկ այլ խնդրի, թե ինչպես արդարացիորեն իրականացնել պատասխանատվության բաշխումը, որպեսզի «բեռի բաշխումը» չվերափոխվի «բեռի փոխանցման», որպեսզի արդյունքում միշտ նույն՝ տնտեսապես հարուստ, պետությունների վրա չընկնի փախստականներին և ապաստան հայցողներին ընդունելու պարտավորությունը: Այս առումով կարևորվել է ՄԱԿ ՓԳՀ-ի դերը փախստականներ ընդունող երկրներին աջակցելու, ինչպես նաև այս ոլորտում միջազգային հանրության կողմից իրականացվող գործընթացները համակարգելու գործում:

**Երկրորդ գլուխը («Փախստականների պաշտպանության միջազգային-իրավական կարգավորումը»)** բաղկացած է երկու պարագրաֆից և նվիրված է համընդհանուր և տարածաշրջանային միջազգային փաստաթղթերով

ամրագրված փախստականի հասկացության վերլուծությանը, ինչպես նաև փախստականների իրավունքների միջազգային-իրավական ամրագրման առանձնահատկություններին:

**Առաջին պարագրաֆում («Փախստականի հասկացությունը ժամանակակից միջազգային իրավունքում»)** վերլուծության է ենթարկվել Փախստականների կարգավիճակի մասին 1951թ. կոնվենցիայով տրված փախստականի համընդհանուր հասկացությունը, որը նախորդ փաստաթղթերի նման չէր սահմանափակվում որևէ կոնկրետ քաղաքացիության պատկանելության կամ էթնիկ ծագում ունեցող խմբով: Սույն պարագրաֆի շրջանակներում մանրամասն ուսումնասիրվել են փախստականի կարգավիճակը ճանաչելու կոնվենցիոն հիմքերը, հատուկ ուշադրության են արժանացել փախստականների իրավունքների պաշտպանությանն ուղղված համընդհանուր մոտեցումներից որոշակիորեն տարբերվող տարածաշրջանային լուծումները, որոնք առաջարկում են փախստականի հասկացության ընդլայնված մոդելը՝ ներառելով արտաքին ագրեսիայի, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ հանգամանքների հետևանքով իրենց երկիրը լքած անձանց: Հատկապես ուշադրության են արժանացել նաև եվրոպական տարածաշրջանում միգրացիոն հոսքերի կարգավորման առանձնահատկությունները: Այս առումով վերլուծության է ենթարկվել 2013թ. ընդունված Դուբլինյան 3-րդ համաձայնագիրը, որն իր նախորդների նման մի կողմից կանխարգելում է ԵՄ անդամ պետություններից յուրաքանչյուրի կողմից իրեն կամայականորեն ապաստանի հայցի քննության համար իրավասու հայտարարելը, մյուս կողմից էլ պետությանը և ոչ թե անհատին է տալիս ընտրության հնարավորություն, թե որ երկրում հայցել ապաստան՝ որոշակի սահմանափակելով նրանց տեղաշարժը ԵՄ տարածքում: Ուսումնասիրությունը հաստատում է, որ Դուբլինյան 3-րդ համաձայնագրի ընդունումը պատասխանն էր նախկինում արված մի շարք դիտողությունների և առաջարկությունների՝ կապված անդամ պետությունների տարածքում ապաստան հայցողների պաշտպանության ընդհանուր չափանիշների ոչ արդյունավետ լինելու, նրանց ընդունելու պայմանների և ապաստանի տրամադրման գործընթացի միասնականության բացակայության հետ: Այն մի շարք դրական փոփոխություններ սահմանեց, սակայն կիրառործվեց այդ կարգավորումները, թե ոչ, ինքնին կախված է անդամ պետությունների հետագա գործողություններից: Այս առումով կարևոր նախապայմաններից մեկը ԵՄ օրենսդրության իմպլեմենտացիան է: որը հնարավորություն կտա ապաստան հայցողին իրականացնել իր իրավունքները և ազգային պաշտպանության բացակայության պարագայում այն փնտրել ԵՄ տարածքում: Տարածաշրջանային մակարդակով փախստականների միջազգային-իրավական պաշտպանության հիմնախնդիրների լուծման մասին խոսելիս անդրադարձ է կատարվել նաև դրա կարգավորմանը հետխորհրդային պետությունների շրջանակներում: Մասնավորապես ուսումնասիրվել է 1993թ. սեպտեմբերի 24-ին ԱՊՀ երկրների կողմից ընդունված Փախստականներին և հարկադիր վերաբնակիչներին օգնության մասին համաձայնագիրը, որը ստորագրել է նաև Հայաստանի Հանրապետությունը: Կատարված ուսումնասիրության արդյունքում

հիմնավորվում է այն հանգամանքը, որ հատկապես վերջին ժամանակաշրջանում տարածաշրջանում տեղի ունեցող հակամարտությունների արդյունքում փախստականների և տեղահանված անձանց թվի ավելացման պարագայում համաձայնագիրը իր նպատակին չի ծառայում և միգրացիոն ժամանակավրեպ է: Ըստ այդմ էլ՝ նպատակահարմար է դիտվում տարածաշրջանային խորհրդատուների կազմակերպումը, որի ընթացքում կքննարկվեն 1993թ. համաձայնագրի դրույթների կիրառման արդյունավետությունը և ժամանակին համահունչ փոփոխություններ նախաձեռնելու նպատակահարմարությունը: Կարևորվում է նաև Փախստականների և բռնի տեղահանվածների աջակցության միջպետական ֆոնդի կազմում մոնիտորինգ և գնահատում իրականացնող մարմնի ստեղծումը, որի արդյունքների հիման վրա հնարավոր կլինի մշակել տարածաշրջանում փախստականների և բռնի տեղահանվածների հիմնախնդիրների լուծմանն ուղղված նոր ռազմավարություն, ընդլայնել ընթացիկ և ապագա ծրագրերը, ապահովել ծախսերի նպատակային իրականացումը և այլն: Ատենախոսության սույն պարագրաֆում քննարկվել է նաև մեկ այլ հիմնահարց՝ կապված անբարենպաստ շրջակա միջավայրի հետևանքով իրենց բնօրրաններից տեղահանված անձանց հետ, որոնց վրա չեն տարածվում 1951թ. կոնվենցիայի և 1967թ. արձանագրության դրույթները, քանի որ նրանք չեն համապատասխանում 1951թ. կոնվենցիայով փախստական ճանաչելու համար առանցքային համարվող «հիմնավոր երկյուղի վրա հիմնված հետապնդում ունենալու» պահանջին. շրջակա միջավայրի փոփոխությունները «հետապնդում» հասկացության ներքո չեն մտնում: Բացի դրանից՝ փախստականի հասկացությունը տարածվում է միայն այն անձանց վրա, ովքեր հատել են իրենց երկրի սահմանները, իսկ «էկոլոգիական փախստականների» դեպքում այդպիսիք կարող են հանդես գալ նաև այն անձինք, ովքեր տեղահանվել են իրենց երկրի սահմաններում և պարզապես փոխել իրենց բնակավայրը երկրի ներսում:

**Երկրորդ պարագրաֆում («Փախստականների իրավունքների միջազգային-իրավական ամրագրման առանձնահատկությունները»)** ուսումնասիրվել են փախստականների հիմնական իրավունքներն ու պարտականությունները, որոնք ամրագրված են 1951թ. կոնվենցիայով, ինչպես նաև մարդու իրավունքների վերաբերյալ այլ միջազգային փաստաթղթերով: Առաջ է քաշվել երկու կարևոր հարցադրում, որոնց տրվել են հնարավորինս լիարժեք ու սպառիչ պատասխաններ: Մասնավորապես, արդյո՞ք մարդու իրավունքների վերաբերյալ չափանիշները կիրառելի են փախստականների և ապաստան հայցողների նկատմամբ, և առկա հակասության դեպքում ո՞րն է ավելի գերակայում: Ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է, որ ապաստանի իրավունքից բխող պաշտպանության ոչ արդյունավետ և ոչ լիարժեք լինելու պարագայում մարդու իրավունքների միջազգային իրավունքը միշտ պատրաստ է լրացնելու կամ փոխարինելու նրան: Ինչ վերաբերում է մարդու իրավունքների ու փախստականների միջազգային-իրավական պաշտպանության միջև առկա հակասության դեպքում փախստականների և ապաստան հայցողների հետ կապված հիմնահարցերի կարգավորմանը, ապա պետք է նախևառաջ փաստել 1951թ. կոնվենցիայի հոդված 5-ը, որի համաձայն կոնվենցիան չի խոչընդոտում

այն իրավունքներին և պարտականություններին, որոնք անդամ պետությունները տրամադրում են փախստականներին կոնվենցիայից դուրս: Այսինքն մարդու իրավունքների վերաբերյալ ընդունված փաստաթղթերը, որոնք կարգավորում են «յուրաքանչյուրին» կամ «բոլոր անհատներին» առնչվող հարաբերությունները, լրացնում և ընդլայնում են պետությունների պարտավորությունները՝ կապված փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանության հետ, և եթե կա որևէ անհամապատասխանություն՝ փոխարինում դրանց: Փաստորեն, եթե նախորդ պայմանագիրը սահմանում է վարքագծի կանոններ, որոնք չեն համապատասխանում հաջորդ պայմանագրի դրույթներին, գերակայող է հանդիսանում վերջինը, եթե, իհարկե, նախորդ պայմանագիրը ավելի լայն իրավունքներ ու ազատություններ չի սահմանում: Վերջին դեպքում նախորդ պայմանագրի այդ դրույթները կշարունակեն գործել՝ որպես հաջորդ պայմանագրից բացառություն, եթե պայմանագիրն ինքնին այլ բան չի նախատեսում:

Սույն պարագրաֆի շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև կոնվենցիոն մարմնի բացակայության խնդրին, որն իրավասու կլինի տալ կոնվենցիայի առանձին դրույթների միասնական պարզաբանումը, վերահսկողություն իրականացնել դրանց պատշաճ կատարման նկատմամբ: Արդյունքում փախստականների իրավունքների պաշտպանությունը առավել արդյունավետ իրականացնելու նպատակով առաջարկվել է մարդու իրավունքների վերաբերյալ մի շարք փաստաթղթերի օրինակով ստեղծել նման կոնվենցիոն մարմին:

**Երրորդ գլուխը («Փախստականների պաշտպանությունը ներպետական իրավունքում»)** բաղկացած է երկու պարագրաֆից և նվիրված է ներպետական իրավունքում փախստականների պաշտպանության միջազգային-իրավական ակտերի իմպլեմենտացիայի հիմնախնդիրներին, ինչպես նաև փախստականների իրավունքների պաշտպանությանն առնչվող ՀՀ ներպետական օրենսդրությանը:

**Առաջին պարագրաֆում («Փախստականների պաշտպանության միջազգային-իրավական ակտերի իմպլեմենտացիան ներպետական իրավունքում»)** հեղինակի կողմից վեր են հանվել տարբեր պետությունների կողմից փախստականների իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային-իրավական ակտերի իմպլեմենտացիայի առանձնահատկությունները՝ ներկայացնելով վերջինիս իրականացման ձևերը և ծավալները: Հիմնավորվել է բոլոր անդամ-պետությունների համար շահեկան իմպլեմենտացիոն մեխանիզմ ձևավորելու խրթին լինելը: Միայն նման մեխանիզմը կարող է ստիպել պետություններին կատարել կոնվենցիայով սահմանված իրենց պարտավորությունները: Այս առումով կոնվենցիան ամրապնդելու և նրան նոր շունչ տալու լավագույն մոդելը ապաստանի ազգային համակարգերի վերանայումն է: Կոնվենցիայի անդամ պետությունները իրենք են համաձայնել մշակել համապատասխան միջոցներ, որոնք հնարավոր է անհրաժեշտ լինեն 1951թ. կոնվենցիան և/կամ 1967թ. արձանագրությունը ամրապնդելու համար: Բացի դրանից՝ 1951թ. կոնվենցիայի հոդված 35-ը պահանջում է, որ մասնակից պետությունները համագործակցեն ՄԱԿ ՓԳՀ-ի հետ:

Այստեղ կարևորվում է հատկապես Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների գծով գերագույն հանձնակատարի գրասենյակի դերը, որը պետք է սահմանի փախստականներին արդյունավետ պաշտպանություն տրամադրելու չափանիշները, խրախուսի պետություններին դրանց համապատասխան սահմանային վերահսկողությունը զարգացնելու և պարտավորությունների բեռը արդարացիորեն բաշխելու գործընթացներում, աջակցի փախստականների հիմնախնդիրների երկարաժամկետ լուծումներ գտնելու գործընթացում, մասնավորապես վերաբնակեցման դեպքերում: Այնուամենայնիվ պետք է փաստել, որ փախստականների իրավունքների պաշտպանության առաջին մակարդակը հանդիսանում են ներպետական օրենսդրությունը, ազգային քաղաքականությունն ու ներպետական մարմինները: Ըստ այդմ էլ՝ միջազգային ռեժիմի փոփոխությունը պետք է սկսել ազգային համակարգերի կատարելագործումից, որը պետք է ամրապնդվի տարածաշրջանային և համընդհանուր համագործակցությամբ՝ ազգային կարողություններն ավելացնելու նպատակով: Այս գործընթացի իրականացման ընթացքում հեղինակի կողմից հատկապես ընդգծվում է երկրում գործող հասարակական կազմակերպությունների դերը, որոնց արդյունավետ գործունեության համար նպաստավոր պայմաններ պետք է ստեղծվեն պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից: Հասարակական կազմակերպությունները կարող են պաշտպանության այլընտրանքային միջոցներ առաջարկել՝ հաշվի առնելով պետության ստանձնած միջազգային պարտավորությունների բնույթն ու ծավալը և ներպետական օրենսդրության առանձնահատկությունները, աջակցել կառավարություններին մոնիտորինգ իրականացնելու հարցում, լուծել անհրաժեշտ տեխնիկական կամ հրատապ միջամտություն պահանջող խնդիրներ: Փախստականների իրավունքների պաշտպանության ոլորտում տեղական, տարածաշրջանային կամ միջազգային համագործակցությունը փախստականների իրավունքների պաշտպանությանն ուղղված արդյունավետ միջոցներից է, որը կարող է իրագործվել և՛ երկրի սահմաններում, և՛ երկրի սահմաններից դուրս

**Երկրորդ պարագրաֆում («Փախստականների իրավունքների պաշտպանությունն ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության»)** վերլուծության է ենթարկվում փախստականների իրավունքների պաշտպանությանն առնչվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը: Ներկայացվում է վերջինիս ձևավորման պատմությունը՝ համեմատականներ անցկացնելով «Փախստականների մասին» 1999թ. և «Փախստականների և ապաստանի մասին» 2008թ. ՀՀ օրենքների միջև: Կատարված համեմատության արդյունքում վեր են հանվում այն հիմնական դրույթները, որոնք ազգային օրենսդրության կատարելագործման և միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով տեղ են գտել նոր օրենքում: Մասնավորապես, «Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ նոր օրենքը սահմանում է փախստականի ընդլայնված հասկացությունը՝ ներառելով տարածաշրջանային կոնվենցիաներով ամրագրված փախստականի ավելի լայն հասկացությունը: Օրենքն այնուամենայնիվ չի պարզաբանում փախստականի հասկացության առանձին տարրերի բովանդակությունը և չի մեկնաբանում



դրանք, ինչը ավելի ճկուն մոտեցում դրսևորելու հնարավորություն է տալիս: Օրենքը չի տալիս նաև «sur place» փախստականի հասկացությունը, երբ անձը փախստական չէր իր հայրենիքը լքելիս, սակայն այդպիսի կարգավիճակի սկսում է հավակնել ավելի ուշ: Հաշվի առնելով նման դեպքերի առկայությունը՝ հեղինակը հիմնավորում է ներպետական օրենսդրության շրջանակներում վերջինիս հստակ կարգավորման անհրաժեշտությունը:

Գործող օրենքը կարգավորման է ենթարկում ընտանիքի անդամների կողմից ապաստան ստանալու, ընտանիքի վերամիավորման և ապաստան հայցող երեխաների հետ կապված որոշ հիմնահարցեր, որոնք բացակայում էին նախորդ օրենքում: Նոր օրենքով նաև որոշակի լրացումներ են արվել, ավելի ստույգ լրացվել են փախստականի կարգավիճակի դադարեցման դրույթներում: Օրենքի պահանջն է, որ արդեն իսկ տրամադրված ապաստանը դադարեցնելու դեպքում պետք է հատկապես ուշադրություն հատկացվի փախստականների իրավունքների պաշտպանության չվերադարձնելու (non-refoulement) սկզբունքին: Այս առումով որոշակի մտավախություն է առաջացնում ազգային անվտանգության համար վտանգ ներկայացնելու դեպքում տրամադրված ապաստանի դադարեցման հիմքը: Ազգային անվտանգության համար վտանգ ներկայացնելու վերաբերյալ եզրակացությունը, որը պետք է լինի հիմնավորված և չվերադարձելիության սկզբունքի պահպանմամբ, տալիս է Ազգային անվտանգության ծառայությունը: Այն այսօր առհասարակ փախստականի կարգավիճակի որոշման գործընթացի հիմնական դերակատարներից է: Բանն այն է, որ Փախստականների և ապաստանի մասին ՀՀ օրենքի հոդված 35-ը, ամրագրելով ազգային անվտանգության մարմնի լիազորությունները այս ոլորտում, սահմանում է, որ այն Միգրացիոն պետական ծառայության խնդրանքի հիման վրա աջակցում է նրան ապաստան հայցողի անձի ինքնությունը պարզելու և նրա կողմից ներկայացված փաստերի քննության հարցում, ինչպես նաև տալիս է եզրակացություն ՀՀ ազգային անվտանգության համար հնարավոր վտանգ ներկայացնելու մասին: Համաձայն սույն օրենքում առաջարկվող փոփոխություններ կատարելու համար ներկայացված օրինագծի՝ լիազոր մարմնի կողմից նման խնդրանքով ազգային անվտանգության մարմնին դիմելը պետք է յուրաքանչյուր դեպքում լինի պարտադիր, իսկ նրա կողմից երկրի համար վտանգավորություն ներկայացնելու մասին տրված դրական եզրակացությունը ապաստանի տրամադրումը մերժելու անվերապահ հիմք: Ներկայումս օրենքը սահմանում է Միգրացիոն պետական ծառայության կողմից ազգային անվտանգության մարմիններին դիմելու հնարավորություն միայն ապօրինի մուտք գործած ապաստան հայցողների դեպքում և ըստ անհրաժեշտության («Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ օրենք, հոդված 34, կետ 1(3): Այնուամենայնիվ օրենքի նման փոփոխությունը կարող է ապաստանի տրամադրումը մերժելու ուղղակի հիմք հանդիսանալ, տեղեկատվության ձեռք բերման սահմանափակ հնարավորությունների պարագայում էլ երբեմն չարաշահումների ու սխալմունքների տեղիք տալ՝ ըստ այդմ էլ նույնիսկ ընդունվելու դեպքում պետք է զգուշորեն կիրառվի, յուրաքանչյուր գործ մանրամասն և ուշադիր քննության առնելուց հետո:

«Փախստականների և ապաստանի մասին» ՀՀ նոր օրենքը ի

տարբերությունն նախորդի նախատեսումն է ժամանակավոր պաշտպանություն տրամադրելու հնարավորություն, երբ անձը ևս ճանաչվում է փախստական, սակայն առանց դրա համար սովորաբար անհրաժեշտ անհատական գործընթացի: Այն կարճաժամկետ արտակարգ միջոց է, որը կիրառվում է անձանց զանգվածային ներհոսքի դեպքում, երբ երկիրը պաշտպանության նվազագույն չափանիշներին համապատասխան ժամանակավորապես ընդունում է իր տարածք ժամանած խմբին:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ-ում փախստականները և ապաստան հայցողները հիմնականում հանդիպում են այնպիսի խնդիրների, որոնց բախվում է յուրաքանչյուր ՀՀ քաղաքացի, մասնավորապես աշխատանքի, սոցիալական ապահովության և այլ բնագավառներում: Առկա սոցիալ-տնտեսական խնդիրները կրում են ընդհանուր բնույթ և չեն վերաբերում բացառապես փախստականների և ապաստան հայցողների իրավունքներին, այդ իսկ պատճառով պահանջում են ընդհանրական և համակարգված լուծում: Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ ՀՀ օրենսդրությունն այսօր ապաստան հայցողներին և փախստականներին տրամադրում է իրենց բարեկեցիկ կյանքն ապահովելու համար անհրաժեշտ հիմնական իրավունքները, սակայն դրա հետ միասին ոչ միշտ է ապահովվում հասարակության մեջ դրանց լիակատար իրականացումը: Փախստականների ինտեգրումը բավականին բարդ գործընթաց է՝ ժամանակատար, աշխատատար և բավականաչափ ֆինանսական ներդրումներ պահանջող, որը հատկապես պայմանավորված է կացարանի հետ կապված խնդիրներով, լեզվական արգելքներով, աշխատանքի շուկա մուտք գործելու բարդությամբ և այլն: Թերևս եթե էթնիկ հայ փախստականներին ավելի դյուրին է տրվում այդ խնդիրների լուծումը՝ գոնե լեզվական նույնության առումով, ապա մյուս փախստականներին դժվար է նոր կյանք սկսել մի երկրում, որն իրենց երկրից տարբերվում է իր լեզվով, մշակույթով, կրոնով, ազգային ավանդույթներով և այլն: Կատարված ուսումնասիրությունների արդյունքում հիմնավորվում է ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ստացած անձանց հասարակության մեջ ինտեգրվելու հետ կապված հարցերին հստակ իրավական կարգավորում տալու անհրաժեշտությունը: Ըստ այդմ էլ փախստականների իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրենսդրությունը կատարելագործելու և Հայաստանի Հանրապետության տարածքում նրանց լիարժեք ինտեգրումն ապահովելու համար ատենախոսության մեջ քննարկվում է «Փախստականների և ապաստան հայցողների մասին» ՀՀ օրենքում փախստականների ինտեգրման հետ կապված հարաբերությունները կարգավորող առանձին բաժին սահմանելու կամ երկրի ներսում իրականացվող փախստականների ինտեգրման գործընթացների կարգավորմանն ուղղված առանձին օրենք ընդունելու հնարավորությունը:

Ատենախոսության սույն պարագրաֆում քննարկվում է նաև ՄԱԿ ՓԳՀ Գործադիր կոմիտեին ՀՀ անդամակցության նպատակահարմարության հարցը, ինչը հնարավորություն կտա մասնակցելու կոմիտեի եզրակացությունների քննարկմանը և ընդունմանը: Հաշվի առնելով Հայաստանում առկա փախստականների խնդիրը, մասնավորապես կապված նրանց իրավունքների

իրականացման արդյունավետության հետ, կարծում ենք, որ անդամակցությունը ՄԱԿ ՓԳՀ Գործադիր կոմիտեին Հայաստանի Հանրապետությանը հնարավորություն կտա վեր հանելու մեր երկրում առկա խնդիրները և գտնելու դրանք լուծելու արդյունավետ միջոցներ:

## **ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐԸ**

Ատենախոսության առարկայի ուսումնասիրության արդյունքում հեղինակի կողմից կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները.

1. Պետությունները պետք է ձեռնպահ մնան ապաստան հայցելու համար երկիր անօրինական մուտք գործելու դեպքում ապաստան հայցողների և փախստականների ձերբակալումից, և այն պետք է կիրառվի միայն բացառիկ դեպքերում: Ձերբակալումը կհամարվի օրինական և ոչ կամայական, եթե այն համապատասխանի 1951թ. կոնվենցիային, մարդու իրավունքների միջազգային իրավունքին և ազգային օրենսդրությանը: Ձերբակալման որոշում կայացնելիս իշխանությունները պետք է արդարացիորեն և զգուշորեն մոտենան դրա հիմնավորվածության, անհրաժեշտության և իր նպատակներին համաչափ կիրառելու խնդրին:

2. Չնայած այն հանգամանքին, որ ընտանիքի միասնության սկզբունքն իր ամրագրումը չի գտել 1951թ. կոնվենցիայում, այնուամենայնիվ այն պետք է ընկալել միջազգային իրավունքի զարգացումների լույսի ներքո, ներառյալ սույն հիմնախնդրին առնչվող մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային-իրավական փաստաթղթերը, պետությունների պրակտիկան և սովորութային նորմերը:

3. Այն դեպքում, երբ գոյություն ունի ընդհանուր պատկերացում, որ պարտավորությունների բաշխումը կնպաստի ցածր կենսամակարդակ ունեցող երկրներին անհարկի ծանրաբեռնելուց խուսափելուն և երկրի պայմաններից ելնելով ապաստանի բացասական որոշում կայացնելու դեպքերը կրճատելով կլուծի փախստականներին ապաստան տրամադրելու հարցը, գործնականում հանգում ենք մեկ այլ խնդրի, թե ինչպես արդարացիորեն իրականացնել պատասխանատվության բաշխումը, որպեսզի «բեռի բաշխումը» չվերափոխվի «բեռի փոխանցման», որպեսզի միշտ նույն՝ տնտեսապես հարուստ պետությունների վրա չընկնի փախստականներին և ապաստան հայցողներին ընդունելու պարտավորության բեռը:

4. Պետությունները փախստականների իրավունքների պաշտպանությունն ապահովելու ճանապարհին պետք է սերտորեն համագործակցեն ՄԱԿ ՓԳՀ-ի հետ: ՄԱԿ ՓԳՀ-ն հնարավորինս աջակցում է պետություններին՝ ընդարձակելով նրանց հնարավորությունները ապաստան տրամադրելու գործում, սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ փախստականների իրավունքների պաշտպանության հիմնական պատասխանատվությունն ընկած է պետությունների և ոչ ՄԱԿ ՓԳՀ-ի կամ այլ միջազգային կազմակերպությունների վրա:

5. 1951թ. կոնվենցիայում տրված փախստականի հասկացությունը չի

տարբերակում հետապնդման իրականացումը պետական կամ ոչ պետական մարմինների կողմից: Բազմաթիվ դատական գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս ոչ պետական մարմինների կողմից հետապնդման ենթարկված անձանց փախստականի կարգավիճակ տալու վերաբերյալ մասնակից պետությունների միջև համաձայնության բացակայությունը, որն էլ վկայում է փախստականների պաշտպանության ռեժիմի խոցելիության մասին: Ստացվում է այնպես, որ խոսվում է փախստականների պաշտպանության ձևական իրավունքի մասին, ոչ պետական մարմինների կողմից հետապնդման ենթարկված անձանց ապաստանի մերժումը պաշտոնապես դատապարտվում է, սակայն փաստացիորեն իրականացվում է անձի վերադարձն այնտեղ, որտեղ նրան հետապնդում է սպառնում: Նման պարագայում փախստականների իրավունքների պաշտպանության համար պետությունները պետք է որդեգրեն միայն պետական մարմինների կողմից իրականացվող հետապնդումն ընդունող երկրներ ապաստան հայցողներին վերադարձնելուց հրաժարվելու քաղաքականություն:

**6.** Փախստականների իրավունքների պաշտպանության ոլորտում սոցիալական խմբի վերաբերյալ մոտեցումները բավականին տարբեր են, և փախստականի կարգավիճակի որոշման գործընթացի կարգավորմանը զուգահեռ՝ յուրաքանչյուր պետություն ըստ էության որդեգրում է նաև իր քաղաքականությունը փախստականի կարգավիճակին հավակնելու հիմքերից յուրաքանչյուրը կիրառելիս՝ կաշկանդված լինելով ստանձնած միջազգային պարտավորություններով: Սոցիալական խմբի պարագայում հնարավոր չէ տալ հանընդհանուր սահմանում: Ցանկացած փորձի դեպքում էլ անհրաժեշտ է այդ սահմանումը «բաց» թողնել հետագայում հետապնդման ենթարկվելու ենթակա նոր ձևավորված սոցիալական խմբերի պաշտպանությունը իրական դարձնելու համար:

**7.** 2013թ. ԵՄ Դուբլինյան 3-րդ համաձայնագիրը մի շարք դրական փոփոխություններ է անրագրել. ավելի են հստակեցվել անդամ պետությունների պարտավորությունները, որոնք լիարժեք չէին սահմանված նախորդ համաձայնագրերում, ավելի հստակ կարգավորման են ենթարկվել ժամկետների և վճարների հետ կապված հարցերը՝ նվազեցնելու համար անդամ պետությունների միջև առկա տարաձայնությունները և վերացնելու համար ապաստան հայցողների կողմից իրենց իրավունքների իրականացման ճանապարհին հանդիպող բյուրոկրատական ու այլ վարչական բնույթի խոչընդոտները և այլն: Առաջադիմական կարելի է համարել Դուբլինյան 3-րդ համաձայնագրով սահմանված «վաղ նախազուշացման մեխանիզմի» ինստիտուտը, որի արդյունավետությունը կախված է համագործակցության պատրաստ ԵՄ երկրների արագ արձագանքից և ճգնաժամային վիճակում գտնվող անդամ պետության պատասխանատվությունից, քանի որ պարբերաբար ուսումնասիրություններ, մոնիտորինգ և վերահսկողական ճիշտ քաղաքականություն իրականացնելու միջոցով է հնարավոր վեր հանել առկա խնդիրները և դրանց տալ համապատասխան լուծումներ: Այս փոփոխությունները միանշանակ դրական գնահատականի են արժանի, սակայն կիրառործվեն դրանք, թե ոչ, կախված է անդամ պետությունների հետագա գործողություններից:

Հատկանշական է, որ նոր համաձայնագիրը ևս ամբողջական լուծում չի տալիս ԵՄ անդամ պետությունների միջև փախստականների «բեռի բաշխման» խնդրին:

**8.** Նպատակահարմար ենք համարում ՄԱԿ ՓԳՀ-ի կողմից նախկին խորհրդային Միության երկրների շրջանակներում տարածաշրջանային խորհրդաժողովի կազմակերպումը, որտեղ կքննարկվի Փախստականներին և հարկադիր վերաբնակիչներին օգնության մասին 1993թ. համաձայնագրի դրույթների կիրառման արդյունավետությունը և ժամանակին համահունչ փոփոխություններ իրականացնելու նպատակահարմարությունը: Հաշվի առնելով փախստականների հիմնախնդրի ձևավորման հետ կապված իրավիճակների դինամիկ բնույթը՝ անհրաժեշտ է տարածաշրջանային մակարդակով ձևավորել և գործադրել մոնիտորինգի ու գնահատման արդյունավետ համակարգ, մասնավորապես, ԱՊՀ համաձայնագրի հիման վրա ստեղծված Փախստականների և բռնի տեղահանվածների աջակցության միջպետական ֆոնդի կազմում անհրաժեշտ է հիմնել մոնիտորինգ և գնահատում իրականացնող մարմին, որի արդյունքների հիման վրա հնարավոր կլինի մշակել տարածաշրջանում փախստականների և բռնի տեղահանվածների հիմնախնդիրների լուծմանն ուղղված նոր ռազմավարություն:

**9.** Ժամանակակից միջազգային իրավունքը մարդու իրավունքների վերաբերյալ իր փաստաթղթերով պատշաճ կերպով չի ապահովում շրջակա միջավայրի խնդիրների հետևանքով տեղահանված անձանց իրավունքների պաշտպանությունը: Նշված կատեգորիայի անձանց վրա չեն տարածվում 1951թ. կոնվենցիայի և 1967թ. արձանագրության դրույթները, քանի որ նրանք չեն համապատասխանում 1951թ. կոնվենցիայով փախստական ճանաչվելու համար առանցքային համարվող «հիմնավոր երկյուղի վրա հիմնված հետապնդում ունենալու» պահանջին: Շրջակա միջավայրի փոփոխությունները «հետապնդում» հասկացության մեջ չեն մտնում: Բացի դրանից՝ փախստականի հասկացությունը տարածվում է միայն այն անձանց վրա, ովքեր հատել են իրենց երկրի սահմանները, իսկ շրջակա միջավայրի խնդիրների հետևանքով տեղահանված անձինք կարող են փախչել նաև իրենց երկրի սահմաններում:

**10.** 1951թ. կոնվենցիայի հոդված 5-ի համաձայն՝ կոնվենցիան չի խոչընդոտում այն իրավունքները և պարտականությունները, որոնք անդամ պետությունները տրամադրում են փախստականներին կոնվենցիայից դուրս: Ըստ այդմ էլ՝ մարդու իրավունքների վերաբերյալ ընդունված փաստաթղթերը, որոնք կարգավորում են «յուրաքանչյուրին» կամ «բոլոր անհատներին» առնչվող հարաբերությունները, լրացնում և ընդլայնում են փախստականների և ապաստան հայցողների իրավունքների պաշտպանությանը վերաբերող պետությունների պարտավորությունները: Գերակայող պետք է լինեն փախստականների իրավունքների առավել լայն պաշտպանություն տրամադրող նորմերը:

**11.** Կարևորում ենք Հայաստանի Հանրապետության անդամակցությունը ՄԱԿ ՓԳՀ Գործադիր կոմիտեին, որը հնարավորություն կտա մասնակցելու Կոմիտեի եզրակացությունների քննարկմանը և ընդունմանը, քանի որ հենց անդամ-պետություններն են ընտրում քննարկման ենթակա հարցերի շրջանակը և դրանց վերաբերյալ կայացնում եզրակացություններ: Ի հարկե, ՄԱԿ ՓԳՀ

Գործադիր կոմիտեի եզրակացությունները իրավաբանորեն պարտադիր նշանակություն չունեն, սակայն տրամաբանական է, որ ՄԱԿ ՓԳՅ-ն ուղղորդվում է կոմիտեի սահմանած քաղաքականությամբ, իսկ պետություններն էլ հնարավորություն են ստանում իրենց ներպետական օրենսդրությունը մեկնաբանել և կիրառել դրա հիման վրա: Ըստ այդմ էլ՝ Հայաստանի Հանրապետությանը հնարավորություն կտրվի վեր հանելու մեր երկրում առկա խնդիրները և գտնելու դրանք լուծելու արդյունավետ միջոցներ:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.**

**1. Վարդանյան Բ.** Չվերադարձնելու սկզբունքը փախստականների միջազգային-իրավական պաշտպանության մեխանիզմում// ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված ՀՀ անկախության հռչակման 20-ամյակին, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջեր 493-505:

**2. Վարդանյան Բ.** Փախստականների միջազգային-իրավական պաշտպանության մեխանիզմի ձևավորումը և պատմական զարգացումը// ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Շահեն Նիկոլայի Պետրոսյանի 100-ամյակին (14 դեկտեմբերի 2012թ.), ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջեր 287-302:

**3. Վարդանյան Բ.** Փախստականների ինտեգրման իրավական հիմնախնդիրները ՀՀ-ում// ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2013թ. նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջեր 315-334:

**4. Վարդանյան Բ.** Փախստականի հասկացության սահմանման արդի հիմնախնդիրները// Պետություն և իրավունք, թիվ 1 (63), Երևան, 2014, էջեր 133-145:

**5. Վարդանյան Բ.** Փախստականների պաշտպանության և մարդու իրավունքների հարաբերակցությունը միջազգային իրավունքում// Դատական իշխանություն, թիվ 6 (180), Երևան, 2014, էջեր 26-35:

## **РЕЗЮМЕ**

### **ВАРДАНЯН КНАРИК АКОПОВНА**

#### **МЕЖДУНАРОДНО-ПРАВОВЫЕ АКТЫ ПО ЗАЩИТЕ**

#### **БЕЖЕНЦЕВ И ИХ РЕАЛИЗАЦИЯ В РА**

Массовый характер потоков беженцев и других миграционных процессов является характерным явлением для современного мира. В настоящее время прием беженцев и создание благоприятных условий для реализации их прав являются одними из приоритетных задач, стоящими перед государствами, которые по ходу приобретают все больший размах, привлекая к себе внимание мировой общественности и требуя доведение сотрудничества и содействия между государствами до качественно нового уровня. В настоящее время основной причиной возникновения беженцев являются войны, внутренние конфликты, ярким примером которого является продолжающаяся с 2011г. гражданская война в Сирии, в результате которой десятки тысяч сирийских жителей были вынуждены покинуть свою страну и искать убежище в других странах, в том числе и в Республике Армения.

Основной целью диссертационной работы является изучение международных, а также внутригосударственных актов защиты прав беженцев, выявление существующих законодательных и интеграционных пробелов и недостатков и представление направленных на их устранение рекомендаций. Проблема защиты прав беженцев и лиц, ищущих убежище требует от международного сообщества разработать новую стратегию, осуществить систематизированные и согласованные меры, направленные на ее эффективное решение и правовое регулирование миграционного потока. Кроме этого, несмотря на тот факт, что на сегодняшний день большинство государств присоединилось к Конвенции 1951г. "О статусе беженцев", тем не менее, будучи обусловленным рядом обстоятельств, не все из них выполняют надлежащим образом взятые на себя обязательства. В этом ключе особо хочется подчеркнуть необходимость решения изучаемой проблемы на региональном уровне. Региональные механизмы обладают более широкими возможностями по выявлению характерных для конкретного региона проблем и их эффективному решению.

Для РА особенно значимым является эффективная реализация положений соглашения 1993г. “О помощи беженцам и вынужденным переселенцам”, которое считаем возможно осуществить только после внесения в него изменений и приведение в соответствие с требованиями времени и модернизации. При изучении принципов защиты прав беженцев особо обращалось внимание на принцип невысылки (*non-refoulement*) как важнейшей гарантии защиты прав беженцев, было обосновано, что последний является обычной нормой, что, тем не менее, не позволяет причислить его к ряду императивных норм (*jus cogens*). Из других принципов защиты прав беженцев изучались запрет на задержание (или взятие под стражу) за незаконный въезд в страну в целях получения убежища, а в исключительных случаях власти, выносящие решение о его применении, должны по справедливости, с осторожностью и соразмерно целям применения подходить к вопросу об обоснованности и необходимости задержания; принцип единства семьи, который не получил своего закрепления в Конвенции 1951г., однако его необходимо воспринимать в свете развития международного права; распределения обязанностей между государствами относительно проблем беженцев, справедливое осуществление которого очень важно, чтобы «распределение бремени» не переросло бы в «передачу бремени» и обязанность приема беженцев и лиц, ищущих убежище, не перекладывалась всегда на одни и те же экономически развитые страны.

Для гармонизации законодательства РА с международными документами, имеющими отношение к изучаемой области, необходимо не только усовершенствовать регулирующее данную область внутригосударственное законодательство, но и создать эффективный интеграционный механизм, который бы способствовал полноценной реализации этих прав. По этому поводу в диссертационной работе обсуждается возможность создания отдельного раздела в Законе РА “О беженцах и лицах, ищущих убежище”, регулирующего отношения, связанные с интеграцией беженцев, или принятие отдельного закона, направленного на регулирование осуществляемых внутри страны процессов интеграции беженцев. Большое значение придается также членству РА в Исполнительном комитете УВКБ ООН, которое даст возможность участвовать в обсуждении и принятии заключений комиссии.



## **SUMMARY**

**KNARIK AKOP VARDANYAN**

### **INTERNATIONAL LEGAL ACTS ON THE PROTECTION OF REFUGEES AND THEIR REALIZATION IN RA**

Refugees and other migration related mass influxes are common in the modern world. At present the reception and creation of appropriate conditions for the protection of the rights of refugees are one of the priority issues to be handled by States which become more acute requiring more effective cooperation between and support by States. These days refugee situations are caused mainly by wars, internal conflicts such as the civil war ongoing in Syria since 2011 as a result of which tens of thousands of persons had to flee their country and seek asylum in other countries, including the Republic of Armenia. Besides the above mentioned refugee situations, they can also be caused by natural disasters although issues related to legal status of persons displaced by natural disasters are not regulated by international legal acts on the protection of refugees.

The main objective of the thesis is the research on international as well as domestic issues regarding protection of refugee rights, including identification of legislative and integration gaps and shortcomings and recommendations directed to their elimination.

The issue of the protection of the rights of refugees and asylum-seekers requires development of a new strategy directed at its durable solution and legal regulation of migration flows to be developed by the international community, as well as, implementation of coordinated and consolidated activities. Besides, despite the fact that the majority of the States have joined the 1951 Convention related to the Status of Refugees, due to some circumstances not all the States follow the obligations assumed. In this regard we find it particularly important to assess the opportunity of finding a solution to the issue in a regional context. Regional mechanisms give wider opportunity to reveal the issues typical for concrete region and find effective solution to them.

For the RA, it is particularly notable the efficient implementation of the provisions of CIS Treaty on Support to Refugees and Forced Migrants which we find possible after it is updated and amendments are made to it. In particular,

the principle of non-refoulement has been touched upon as a most essential guarantee for refugee rights, and justification for its becoming customary law which, however, does not allow to consider it as an imperative (*jus cogens*) norm. Among other principles related to the protection of refugees the issue of non-detention of asylum-seekers upon their illegal entry into a country has been studied. The states which, nonetheless, decide to practise detention on exceptional basis must consider it with caution and propose well-founded grounds in order to achieve impartial implementation of its objectives and respect the principle of family unification. The latter has not, however, been reflected in the 1951 Convention. This issue, however, should be seen in the light of developments of international law. Distribution of the protection of refugee rights the fair implementation of which is to be ensured by the states must not, however, turn from “burden sharing” to “burden shifting”, and the obligation of the reception of asylum-seekers and refugees must not always fall on the shoulders of the same, economically developed and wealthy countries.

In order to align the legislation of the Republic of Armenia to the international acts related to the given field, it is not only necessary to upgrade the inter-governmental legislation regulating the field but also to create such an efficient integration mechanism which will contribute to the full implementation of the rights. In this regard, the thesis addresses the possibility of incorporation of a separate chapter in the RA Law on Asylum-Seekers and Refugees that will aim at regulation of integration related issues, or development of a separate law directed to regulation integration related procedures within the country.

In addition, possible membership of the Republic of Armenia in UNHCR Executive Committee is considered as a crucial step that would grant the country the opportunity to participate in discussions and in adoption of final recommendations by the Committee.